**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի միջև կնքված N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ԱԹ-1-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ**

ք. Երևան

«09» օգոստոսի 2024թ.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը, ի դեմս ռեկտորի ժ/պ Ա. Գրիգորյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Նարիբեկյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, այսուհետ կողմեր, ղեկավարվելով Գնորդի և Վաճառողի միջև 2024թվականի հուլիսի 29-ին կնքված N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ԱԹ-1-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8,5 կետի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը:

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Պատվիրատուն սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած ապրանքների լրացուցիչ գնում կկատարի Վաճառողից Պայմանագրի ընդհանուր գնի՝ 20 558 850 (քսան միլիոն հինգ հարյուր հիսունութ հազար ութ հարյուր **հիսուն)** ՀՀ դրամի մինչև 10 տոկոսի չափով՝ 1 031 655 (մեկ միլիոն երեսունմեկ հազար վեց հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Պայմանագրի 3.1-ին կետում **20 558 850 (քսան միլիոն հինգ հարյուր հիսունութ հազար ութ հարյուր հիսուն)** բառերը փոխարինել **21 590 505 (քսանմեկ միլիոն հինգ հարյուր իննսուն հազար հինգ հարյուր հինգ)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն բառերով:

1.3 Պայմանագրի N 1 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1.1 Հավելվածի:

1.4 Պայմանագրի N 2 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2.1 Հավելվածի:

## 2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1 Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից, որի գործունեությունը տարածվում է 2024 թվականի հուլիսի 29-ից ծագած հարաբերությունների վրա:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում այս համաձայնագրի դրույթներին:

## 3. Այլ պայմաններ

3.1 Համաձայնագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն համաձայնագրով չնախատեսված այլ հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

3.2 Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ հակառակ դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.4 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի N 1.1 և N 2.1 Հավելվածները կազմված են 5 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**ԳՆՈՐԴ**
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Նալբանդյան 128
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ
900018001876
ՀՎՀՀ՝ 01503224

Ռեկտոր ժ/պ՝ ____________ Ա. Գրիգորյան
(ստորագրություն) Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Արգավանդ Կահույք» ՍՊԸ
Գ. Արգավանդ, Մայրաքաղաքային 202
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ163218020242
ՀՎՀՀ 01261634
հեռ. 043-43-43-42

Տնօրեն՝ ____________ Գ. Նարիբեկյան
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված 1.1
«09» օգոստոսի 2024թ. կնքված
N 1 Համաձայնագրի
Հավելված N 1
«29» հուլիսի 2024թ. կնքված
N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ԱԹ-1-1 պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ապրանքի | | | | | | | | | | |
| չ/հ | անվանումը | տեխնիկական բնութագիրը | ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը ** | չափման միավորը | միավոր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը*** |
| 1 | Աթոռ 1 | Համաձայն աղյուսակ 1-ի | ООО «ЖИЛПРОМС СЕРВИС» | հատ | 9400 | 5 583 600 | 594 | Ք. Երևան Նալբանդյան 128 | 594 | Պայմանագիրը (իսկ լրացուցիչ գնված ապրանքների համար կնքված համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում: |
| 3 | Աթոռ 3 | | | հատ | 13400 | 3 001 600 | 224 | | 224 | |
| 4 | Աթոռ 4 | | | հատ | 19 696.55 | 3 112 055 | 158 | | 158 | |
| 5 | Աթոռ 5 | | | հատ | 7789.96 | 9 893 250 | 1270 | | 1270 | |

Աղյուսակ 1

| չ/հ | Անվանումը | Տեխնկական բնութագիրը |
|---|---|---|
| 1 | Աթոռ 1 | Կոնստրուկցիան՝ կարկասը մետաղական՝ սև ջերմային փոշեներկված մետաղից, 4 մետաղական սև ջերմային փոշեներկմամբ ոտքերով (օվալաձև սնամեջ ): Նստատեղը և հենակը պլաստիկից՝ առանց որևէ այլ նյութի երեսպատման: Նստատեղը և հենակը մետաղական կոնստրուկցիային կամրացվեն 2 առանձին կտորներով:<br>Պլաստիկե նստատեղը հարթ (առանց անցքերի, առանց գործվածքի), հենակը կլինի հարթ: Աթոռի դիզայնը ըստ մատնանշված լուսանկարների:<br>Նստատեղի և հենակի պլաստիկի գույները սև, սպիտակ, մոխրագույն, կանաչ, կապույտ, կարմիր, բալագույն, նարնջագույն (նշված քանակության մեջ առանձին գույների քանակային չափերը ըստ պատվիրատուի պահանջի):<br>Աթոռի չափերը.<br>- Լայնություն 460 մմ<br>- Խորություն 440 մմ<br>- Բարձրություն 825 մմ<br>- Նստատեղի բարձրությունը հատակից 450 մմ:<br>Աթոռի մաքսիմալ ծանրաբեռնվածությունը՝ 100 կգ:<br>Երաշխիքի տրամադրում՝ 1 տարի:<br>Մատակարարման ժամկետը՝ պայմանագիրը կնքելուց հետո 30 օր:<br>Ապրանքը կմատակարարվի հավաքված և օգտագործման պատրաստ վիճակում: Մատակարարումը մինչև պատվիրատուի պահեստ՝ մատակարարի հաշվին: |
| 3 | Աթոռ 3 | Կոնստրուկցիան՝ կարկասը մետաղական, սև ջերմային փոշեներկված մետաղից (օվալաձև), 2 սև ջերմային փոշեներկմամբ ոտքերով: Ոտքերը ստացված 1 միասնական ձողից, որոնց անկյունները ստացված են ոչ թե զոդման այլ մետաղի ճկման արդյունքում: Նստատեղը և հենակը բարձրորակ էկոկաշվի երեսպատմամբ փայտանյութից (ֆաներա): Նստատեղի և հենակի միջուկը (երեսպատման կտորի) արտաքին կողմից՝ կահույքագործական սպունգ (գուպկա):<br>Նստատեղը և հենակը մետաղական կոնստրուկցիային կամրացվի 2 առանձին կտորով: Նստատեղը և հենակը հարթ (առանց անցքերի, առանց գործվածքի: Աթոռի դիզայնը ըստ |

| | | |
|---|---|---|
| | | մատնանշված լուսանկարների:<br>Նստատեղի և հենակի պլաստիկի և էկոկաշվի գույները սև, սպիտակ, մոխրագույն, կանաչ, կապույտ, կարմիր, նարնջագույն, շագանակագույն (նշված քանակության մեջ առանձին գույների քանակային չափերը ըստ պատվիրատուի պահանջի):<br>Աթոռի չափերը.<br>- Լայնություն 460 մմ<br>- Խորություն 480 մմ<br>- Բարձրություն 820 մմ<br>- Նստատեղի բարձրությունը հատակից 450մմ:<br>Աթոռի մաքսիմալ ծանրաբեռնվածությունը՝ 100 կգ:<br>Երաշխիքի տրամադրում՝ 1 տարի:<br>Մատակարարման ժամկետը՝ պայմանագիրը կնքելուց հետո 30 օր:<br>Ապրանքը պետք է մատակարարվի հավաքված և օգտագործման պատրաստ վիճակում:<br>Մատակարարումը մինչև պատվիրատուի պահեստ՝ մատակարարի հաշվին: |
| 4 | Աթոռ 4 | Կոնստրուկցիան՝ կարկասը մետաղական, սև ջերմային փոշեներկված մետաղից (օվալաձև), 2 սև ջերմային փոշեներկմամբ ոտքերով: Ոտքերը ստացված 1 միասնական ձողից, որոնց անկյունները ստացված են ոչ թե զոդման այլ մետաղի ճկման արդյունքում: Նստատեղը և հենակը փայտանյութից (ֆաներա) ՝ բարձրորակ էկոկաշվի երեսպատմամբ: Նստատեղի և հենակի միջուկը (երեսպատման էկոկաշվի) արտաքին կողմից՝ կահույքագործական սպունգ (գուպկա):<br>Նստատեղը և հենակը մետաղական կոնստրուկցիային ամրացված են որպես 1 ամբողջական կտոր:<br>Նստատեղը և հենակը կարերով՝ ուղղանկյուն: Աթոռի դիզայնը ըստ մատնանշված լուսանկարների:<br>Նստատեղի և հենակի էկոկաշվի գույները սև, սպիտակ, բեժ կանաչ, դեղին, շագանակագույն (նշված քանակության մեջ առանձին գույների քանակային չափերը ըստ պատվիրատուի պահանջի):<br>Աթոռի չափերը.<br>- Լայնություն 430 մմ<br>- Խորություն 500 մմ<br>- Բարձրություն 830 մմ<br>- Նստատեղի բարձրությունը հատակից 450 մմ:<br>Աթոռի մաքսիմալ ծանրաբեռնվածությունը՝ 100 կգ:<br>Երաշխիքի տրամադրում՝ 1 տարի:<br>Մատակարարման ժամկետը՝ պայմանագիրը կնքելուց հետո 30 օր:<br>Ապրանքը կմատակարարվի հավաքված և օգտագործման պատրաստ վիճակում:<br>Մատակարարումը մինչև պատվիրատուի պահեստ՝ մատակարարի հաշվին: |
| 5 | Աթոռ 5 | Կոնստրուկցիան՝ կարկասը մետաղական, սև ջերմային փոշեներկված մետաղից (կլոր), 4 սև ջերմային փոշեներկմամբ մետաղական ոտքերով, նստատեղը և հենակը պլաստիկից՝ կտորի երեսպատմամբ փայտանյութից (ֆաներա): Նստատեղի և հենակի միջուկը (երեսպատման կտորի և փայտանյութի արանքում) արտաքին կողմից՝ կահույքագործական սպունգ (գուպկա):<br>Նստատեղի և հենակի երեսպատման կտորի գույները սև, մոխրագույն, կանաչ, կապույտ, կարմիր, բալագույն, նարնջագույն, շագանակագույն (նշված քանակության մեջ առանձին գույների և ընդունելի ծևերի քանակային չափերը ըստ պատվիրատուի պահանջի):<br>Երեսպատման կտորը ամուր, խիտ գործվածքի<br>Նստատեղը և հենակը մետաղական կոնստրուկցիային ամրացված կլինեի 2 առանձին կտորով:<br>Աթոռի չափերը.<br>- Լայնություն 440 մմ<br>- Խորություն 540 մմ |

| | | |
|---|---|---|
| | | - Բարձրություն 810 մմ<br>- Նստատեղի բարձրություն հատակից 450մմ:<br>Աթոռի մաքսիմալ ծանրաբեռնվածությունը՝ 100 կգ:<br>Երաշխիքի տրամադրում՝ 1 տարի:<br>Մատակարարման ժամկետը՝ պայմանագիրը կնքելուց հետո 30 օր: Ապրանքը կմատակարարվի հավաքված և օգտագործման պատրաստ վիճակում: Մատակարարումը մինչև պատվիրատուի պահեստ՝ մատակարարի հաշվին: |

**ԳՆՈՐԴ**
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Նալբանդյան 128
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ
900018001876
ՀՎՀՀ՝ 01503224

Ռեկտոր ժ/պ՝ ______________ Ա. Գրիգորյան
(ստորագրություն) Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Արգավանդ Կահույք» ՍՊԸ
Գ. Արգավանդ, Մայրաքաղաքային 202
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ163218020242
ՀՎՀՀ 01261634
հեռ. 043-43-43-42

Տնօրեն՝ ______________ Գ. Նարիբեկյան
( ստորագրություն) Կ.Տ

Հավելված 2.1
«05» օգոստոսի 2024թ. կնքված
N 1 Համաձայնագրի
Հավելված N 2
«29» հուլիսի 2024թ. կնքված
N ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-24/ԱԹ-1-1 պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/Հ | (CPV) | անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 39111140 | Աթոռ 1 | | | | | | | | 5 076 000 | 5 583 600 | 5 583 600 | 5 583 600 | 5 583 600 | **5 583 600** |
| 3 | 39111140/2 | Աթոռ 3 | | | | | | | | 2 733 600 | 3 001 600 | 3 001 600 | 3 001 600 | 3 001 600 | **3 001 600** |
| 4 | 39111140/3 | Աթոռ 4 | | | | | | | | 2 856 000 | 3 112 055 | 3 112 055 | 3 112 055 | 3 112 055 | **3 112 055** |
| 5 | 39111140/4 | Աթոռ 5 | | | | | | | | 9 893 250 | 9 893 250 | 9 893 250 | 9 893 250 | 9 893 250 | **9 893 250** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ
ք. Երևան, Նալբանդյան 128
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ
900018001876
ՀՎՀՀ՝ 01503224

Ռեկտոր ժ/պ՝ ______________ Ա. Գրիգորյան
(ստորագրություն) Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Արգավանդ Կահույք» ՍՊԸ
Գ. Արգավանդ, Մայրաքաղաքային 202
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ163218020242
ՀՎՀՀ 01261634
հեռ. 043-43-43-42

Տնօրեն՝ ______________ Գ. Նարիբեկյան
( ստորագրություն) Կ.Տ